

մուսուլմանները իր մանրամասնութիւններով, որովհետեւ կարծես ամենքն էլ նրա մէջն էին մարմնացած տեսնում դպրոցը:

Ներսիսեան դպրոցը իր գրեթէ մի դարու գոյութեան ընթացքում եղել է մի ուրոյն կրթական հաստատութիւն բուն ժողովրդական հոգով: Նա հիմնուել է ժողովրդի լուսմանն ուղղուած պահանջներէ և ժողովրդի քրտինքով: Ուստի և նրա դռները միշտ բաց են եղել բուն ժողովրդի զուակներին առաջ: Աս այն միակ հաստատութիւնն է եղել, ուր վստահ ու համարձակ դիմել են բոլոր վաստակաւորներն ու բեռնաւորները, տգիտութեան դռները, և այս հաստատութիւնը պարտաւորուած է եղել գրկաբաց բնուցելու, լոյս ու տաք անկիւն տալու ներանց: Հայ գիւղացին, հայ արհեստաւորը, հայ տէրտէքը, այրիները, անանկները իրենց երեխաների ձեռքերից բռնած միշտ համարձակ մտել են ազգային այս հաստատութիւնը.— որպէս մի հարազատ վայր, միշտ էլ հաւատացած, որ այդտեղ իրանց վիճակը գիտակցող և իրենց լեզուն հասկացող կայ: Այդ հոգին, այդ ուղղութիւնն է եղել երջանկայիշատակ հիմնադրի ցանկութիւնը: այդ վէմի վրայ է հիմնել կրթական այս հաստատութիւնը և այդ հոգու կենդանի հարազատ մարմնացումն է եղել Գրիգորը իր երկարամիայ ծառայութեան ընթացքում: Նա իր ծառայութեան, իր պաշտօնի էութիւնը հինգ դրանումն է գտել: Գործի բակը մանող ամեն մի կարիքաւոր, ամեն մի խնդրատու զարմանալի բնազդամբ ամենից առաջ դիմում էր հանգուցեալին. և այդ բարի, պարաստակամ ու լայն բնաւորութիւնը երբէք մերժել չգիտէր և՛ ոչ մէկին, զարմանալի տոկոսութեամբ համբերութիւն էր ունենում ամենքին պատասխանելու: մէկին միեմտարում էր, երկրորդին յուսադրում, երրորդին մի խելօք խորհուրդ տալիս,— միով բանիւ ամենքի համար մի հնար էր գտնուում: Եւ ինչպէս կարող էր մերժել մէկին, երբ նա իր ամբողջ կեանքում կարիք էր փնտռում, որ օգնութեան ձեռք մեկնէր, սակայն այնպէս, որ այդ ձեռքը մնար աներևոյթ: Նա իր ամբողջ կեանքը աշխատում էր ուրիշների համար ապրել, սակայն այնպէս, որ նրան չճանաչէին:

Այն, որ մեզ՝ Ներսիսեան դպրոցի սուրբ յարկի տակ ծառայողներին համար օրինակելի է, այդ նրա անխորհրդի, հաւատարիմ կապն է դէպի դպրոցը և անօրինակ պարտաճանաչութիւնը: Երկար տարիների ընթացքում որդիական ամենաջերմ սիրով կապուել էր այս հաստատութեան հետ: դպրոցը դարձել էր նրա Արբուսութիւն Սրբոցը:

Վերջին երկու տարին ծերութիւնը յաղթել էր նրան. բայց նա չէր ուզում տեղի տալ, չէր ուզում դաւաճանել իր ծնողին. յաճախ դիմում էինք նրան և ասում, թէ՛ պարոն Գրիգոր ժամանակ է որ հանգստանաս, այսուհետեւ էլ երկար չես ապրելու, գտնէ ծերութեանդ վերջին տարիները հանգիստ անցկացրու: Նա վիրաւոր-

ուում էր և պատասխանում, թէ ուզում էք ինձ կենդանի թողել. իմ մահովս, ասում էր նա, աշխարհը ոչինչ չի կորցնի, իսկ զաւրով իմ անձնական հանգստութեանը, իրաւունք չունիմ ձեզ պէս մտածելու: դպրոցը իմ հարազատ ծնողն է եղել, ես մի որբ երեխայ եմ եղել, դպրոցը ինձ վերածնել է, սնել, մեծացրել, մարդ է դարձրել, միով բանիւ ինձ կեանք է տուել.— ես էլ պարտաւոր եմ իր տուած կեանքը իրեն դարձնելու: Եւ այս լուր բառեր չէին նրա բերանում, իրօք որ այդպէս էլ արեց. հէնց դպրոցի պատերից նրան տարան մահուան անկողին:

Եւ այդպէս, ահա, այսօր մենք գերեզման ենք իջնում ոչ թէ միայն մի բարեխիղճ, պարտաճանաչ պաշտօնեայ, այլ մի անփոխարինելի ոյժ, մի հազուագիւտ անձնաւորութիւն, որի տեղը դժուար թէ մի ուրիշը կարողանայ բռնել:

Ծուռնկ եմ չոգում բազմաշխատ ածիւնիդ առաջ, պարոն Գրիգոր, և յարգանքով դառնում կենդանի յիշատակիդ, որ անօրինակ համեստութիւնդ օրինակ լինի նոր սերնդին, թող օրինակելի պարտաճանաչութիւնդ դաս լինի մեզ՝ ծառայակիցներիդ և դազադղ չըջպատող աշակերտներիդ համար, իսկ անձնաւորութիւնդ՝ ամենալուծառանգութիւնը մնաց մեզ ամենիս համար: Վերջին անգամ համբուրում եմ այն ձեռքերը, որ շատ անգամ է օգնութեան հասել ինձ և ինձ նմաններին հայրախնամ կարեկցութեամբ:

Լ Ո Ւ Ր Ե Ր

- ◆ Սեպտեմբերի 7-ին Բօրժօմ. Պէմբրոսիակի պարկում բացուել է արձան Կովկասի նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միքայէլ Նիկայայեվիչի յիշատակին:
- ◆ Սեպտեմբերի 9-ին Պետերբուրգում վաղճանուեց Վրաստանի Էկզարխ Իննօկէնտի արքեպիսկոպոսը:
- ◆ Թիֆլիզ է ժամանել երկրագործութեան նախկին նախարար Ա. Ս. Երմոլով:
- ◆ Մեր աշխատակից արժ. Ե. ա. ք. Կեղամեանի պատմական քաղաւածները յօդուածի շարունակութիւնը առայժմ յետաձգուած է մի երկու կարևոր նիւթերի մասին դօկումենտներ ձեռք բերելու պատճառով:
- ◆ Մի ակամայ սխալ. «Հովիտ»-ի № 31-ում տպուած «Պատմական Քաղաւածներ» յօդուածը պէտք էր № 32-ում լինէր, իսկ № 32-ինը՝ № 31-ում:
- ◆ Ամսիս 17-ից վերջացաւ գործադուլը և վերսկրուեց Թիֆլիզի արամվայի երթնակութիւնը:
- ◆ Հօկտեմբերի 6-ին կատարուելու է «Русск. Вѣд.» թերթի յանամեակը:
- ◆ Թիֆլիզի թեմ. յօբելեանական յանձնաժողովը հրաժարական է տուել, նեղացած որ Վեհ. Կաթողիկոսը թոյլ չէ տա: Ել իրեն նաեւ գրական ֆօնդի համար գործելու:

Խմբագիր-հրատարակիչ՝  
Ն.ՉՆՆԿ Ա. ԲԱՀ. ՆՐ.ՉՆԿՆԱՆ

# ՀԱՄԵՏ

ՀՐԱՏԱՐԱԿ, VIII-ՐԴ ՏԱՐԻ

1913 թ.

Սեպտեմբերի 22

№ 37

Ս.ԶԳԱՅԻՆ, ՀՕՍԱՐԱԿՕԿՈՆ, ԳՐԱԿՕՆ

ՀՆԲԱՐԱԹԵՐԻՉ

Լոյս է տեսնում կիրակի օրերը

ՏԵԼԵՖՕՆ № 13—29

Ս.ՌԱՆՁԻՆ №-Ր 10 Կ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

1. Համազգային տոնի նախօրեակին.
2. Վնասակար կոչեր.
3. Պատկառելի յօթելեան.
4. Վերջին բազաբական անցքերը մերձուր արեւելքում և հայկական խնդրի վերազարթնումը.
5. «Շորիգոնի» խոստովանութիւնը.
6. Թուուցիկ էջեր.
7. Գրիգոր Տէր-Յարութիւնեան:

8. Միլանի հրովարտակը.
9. Մի գրախօսականի առթիւ.
10. Արժանաւոր ընտրութիւն.
11. Չաւէն եպ. Տ. Եղիսեան.
12. Օրմանեան Սրբ.ի առօրջական վիճակը.
13. Նամակներ խմբագրութեան.
14. Լուրեր.
15. Յայտարարութիւններ.

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Հոկտեմբերի 12-ին կատարուելու է համազգային յօթելեանը—հայկական գրերի 1500-ամեակը և տպագրական խօսքի 400-ամեակը:

Ներկայ համարում տալիս ենք յօթելեանական յանձնաժողովի պաշտօնական ընդհանուր տօնակարգը:

Աձեն մի հայ, որի սրտին յօտ է մայրենի դպրութիւնը, հայ գիրն ու գրականութիւնը, պէտք է սիրով ընդառաջ գնայ հայրապետական այս նուիրական կոչին և իր կարողութեան չափով մասնակցէ այդ տօնին, որ միաժամանակ՝ և՛ եկեղեցական, և՛ համաժողովրդական մեծ տօն է:

Ճատ ժամանակ չէ մնացել մինչև տօնի օրը և անշուշտ շտապելու ենք մի օրէէ պատկառելի

գործով յաւերժացնել հոկտեմբերի 12-ը: Որոշուած է հիմնել դպրոցական ֆօնդ—ուրեմն նըպաստենք այդ ֆօնդի կազմակերպուելուն:

Սակայն ցաւ ի սիրտ պէտք է նկատենք, որ դեռ անորոշութիւն, անշարժութիւն է տիրում, դեռ ոչինչ չէ արուած մեր թեմերում, ուր պէտք է կազմուէին յանձնաժողովներ և դրամական օգնութեան, ժողովարարութեան զիմուսներ լինէին արուած արդէն վաղուց:

Թուում էր, թէ Թիֆլիզը—իրբև ուսաստանութեան մտաւոր կենդրոն—պիտի օրինակ տար միւս թեմերին իր գործունէութեամբ, թեյադրէր եռանդուն աշխատանքի գործեակները:

Բայց հէնց այդ Թիֆլիզն է, որ կազմալուծուած է ամբողջ գործը, պառակտման սերմեր սփռում միւս թեմերը, և առաջին մեծ հարուածը տալիս մեծ տօնին, նրա յաւերժացման նուիրական գործին:

Ժամանակը չէ այսօր խօսել այս տղեղ երևոյթի մասին և ոչ էլ ծանրանալ պատասխանատուութեանց վրայ: Այս բոլորի մասին պէտք է խօսել, բայց յետոյ, տօնից յետոյ, դրա համար շատ ժամանակ կայ մեր առաջ: Իսկ մինչև հօկտեմբերի 12-ը միայն միքանի օր է մնացել, ժամանակը շատ սուղ է, իսկ կատարելիք դործը մեծ, — ուրեմն աշխատենք պատուով կանգնեցնել գոնէ հիմքը այն մեծ գործի — ռպլոցական ֆօնդի — որի մասին երկու կարծիք չի կարող լինել:

**ՎՆԱՍԱԿԱՐ ԿՈՉԵՐ**

«Հոյիտ»-ը — իր ամբողջ գոյութեան ընթացքում — այն թերթն է եղել, որ ամենից բուռն կերպով քննադատել է Ս. Էջմիածնում տիրող կարգերը, նա մինչ այն աստիճան անողոր է եղել իր մերկացումների մէջ, որ նոյնիսկ դժգոհութեան առիթ է տուել «արմատական» տարրերին, որոնք կոչ էին անում հայ ժողովրդին՝ մեր արիւնով մաքրել քննադատական այդ արշաւանքից, իբր թէ, Մայր Աթոռին հասնող վիրանքը:

Սակայն ժամանակը ցոյց տուեց, թէ մենք միանգամայն իրաւացի ենք եղել:

Մենք այսօր էլ այն կարծիքի ենք, որ պէտք է մերկացնել Մայր Աթոռի սխալները, քննադատել Էջմիածնի տգեղութիւնները — առանց երբէք այդ քննադատութիւնները անձնական կամ թայֆայական շահերի շուրջը պտտեցնելու: Հրապարակից չպէտք է վախել, և մամուլի սրբազան պարտքն է ճշմարտութեան ու առաքինութեան առաքեալ լինել:

Սակայն երբէք, այն, երբէք Էջմիածինը բլլկօտի ենթարկելու խորհուրդներ, Մայր Աթոռից վազ անցնելու կոչեր չուղղենք ժողովրդին, որովհետև ամենից աւելի հէնց այդ ժողովուրդն է տուժելու նման քայլերից: Բոյկոտով և վազ անցնելով անկարելի է վերածնել Մայր Աթոռը, այլ գիտակցական հետաքրքրութեամբ:

Մեզ սխալ չհասկանալու համար, կրկնում ենք, — հարուած ենք տգեղութիւնները, քննադատենք մեծից մինչև փոքրը, ամենաբարձր

պաշտօնեայից մինչև յետին սպասաւորի հասարակական գործունէութիւնը — քանի որ մեր եկեղեցու ոգուն դէմ է պապական անսխալականութեան սկզբունքը, — բայց երբէք ինքնասպանութեան կոչեր չուղղենք ժողովրդին, որովհետև Ս. Էջմիածնից երես դարձնելը՝ հայ ժողովրդի ինքնասպանութիւնը կը նշանակէ:

**ՊԱՏԿԱՌԵԼԻ ՅՕՐԵԼԵԱՆ**

Սեպտեմբերի 3-ին լրացաւ յիսուն տարին յայտնի «Русскія Вѣдомости» թերթի, այդ պատուական թերթի, որ յիսուն երկար տարիների ընթացքում լաւագոյն գաղափարների, ազնիւ զգացմունքների տարածողն է եղել ուս հասարակութեան մէջ, որ կրթել-դաստիարակել է ընտիր իդէալներով ոգևորուած մի ահագին ինտելիգենտ սերունդ:

Կէս դար շարունակ այդ թերթը՝ յառաջաւոր ուս ինտելիգենցիայի լաւագոյն բարեկամը, ընկերը, խորհրդատուն և ուսուցիչն է եղել, և պատուով ու շիտակութեամբ կատարել է իր ծանր և անշնորհակալ դերը:

Ո՛չ միայն Ռուսաստանում, որտեղ միայն վերջերս է սկսել ծաղկել լրագրութիւնը, այլև արտասահմանում, լրագրի համար յիսնամեայ հասակը խիստ պատկառելի է համարում և հաջուագիւտ երևոյթներից մէկը պէտք է ճանաչել: Ռուսաստանում ցենզուրական ծանր պայմանների մէջ բազմաթիւ թերթեր չկանաչած չորացել-մեռել են և երբէք ապրել են ցայժմ թերթեր, որոնք հասակով աւելի մեծ են, քան «Русскія Вѣдомости»-ն, դրանք համարեա բոլորն էլ պաշտօնական կամ կիսապաշտօնական թերթեր են եղել — «С.-Петербургскія Вѣдомости», «Московскія Вѣдомости», «Русскій Инвалидъ» և այլն, — դրանք բոլորն էլ վայելել են ցենզուրայի բարեհաճութիւնը և հանգիստ ու ապահով մինչև այսօր էլ շարունակում են իրենց գոյութիւնը:

Այլ պայմանների մէջ են դրուած եղել մասնաւոր, այսպէս կոչուած՝ անկախ պարբերական հրատարակութիւնները և դրանց մէջ մանաւանդ այնպիսիները, որոնք համարուել են ազատամիտ՝